Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
«_31_ »__08__ 2020 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):
Ամբիոնի պետ, ոստ. փոխգնդապետ
Ա. Հովհաննիսյան ……
(ստորագրություն)

……
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ քրեական դատավարության իրավունք – 3 (հեռակա անվճար ուսուցում)
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական դատավարության ամբիոն E-mail: qrdatambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Հովհաննիսյան (ի. գ. թ., դոցենտ) E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		4-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		-
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«ՀՀ քրեական դատավարության իրավունք – 3» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 10 ժամ, որից 6-ը՝ դասախոսություն, 2-ը՝ սեմինար, 2-ը՝ գործնական: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացը գնահատվում է միջանկյալ քննության անցկացմամբ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «Իրավապահ մարմիններ», «ՀՀ սահմանադրական իրավունք», «ՀՀ քրեական իրավունք», «ՀՀ քրեական դատավարության իրավունք –1» և «ՀՀ քրեական դատավարության իրավունք –2» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ քրեական դատավարության իրավունք – 3» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են քրեական գործով վարույթի կասեցման, կարճման և քրեական հետապնդման դադարեցման, մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտման, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, առաջին ատյանի դատարանում դատական քննության հասկացությունը և ընդհանուր պայմանները:
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ քրեական մինչդատական վարույթի և դատական քննության վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1. սահմանել քրեական գործով վարույթի կասեցման, կարճման և քրեական հետապնդման դադարեցման հիմքերը, ներկայացնել դատավարական կարգը. 2. ներկայացնել մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտման կարգը, 3. ներկայացնել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության բովանդակային տարրերը, դատարանում միջնորդությունների քննարկման ու որոշումների կայացման կարգը. 4. ներկայացնել առաջին ատյանում դատական քննության բովանդակությունը և կարգը. 5. ներկայացնել արագացված դատական քննության բովանդակությունը և կարգը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **1. *Կարողանա՝***		1. բացատրել քրեական գործով վարույթի կասեցման, կարճման ու քրեական հետապնդման դադարեցման էությունը, նշանակությունը, դասակարգել ու համեմատել քրեական հետապնդման դադարեցման հիմքերը, կայացնել որոշումներ՝ քրեական գործով վարույթը կարճելու, կասեցնելու (վերսկսելու), քրեական հետապնդումը դադարեցնելու մասին. 2. ներկայացնել մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտման դատավարական կարգը, կազմել մեղադրական եզրակացություն,

		3. բացատրել և մեկնաբանել դատական նիստի նախապատրաստման, դատաքննության, դատական վիճաբանությունների, ամբաստանյալի վերջին խոսքի էությունը և նշանակությունը, 4. սահմանել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հասկացությունը, թվարկել դատական վերահսկողության ենթակա քննչական գործողությունները, դատավարական հարկադրանքի միջոցները և օպերատիվ-հետախուզական միջոցառումները, կայացնել համապատասխան միջնորդությամբ դատարան դիմելու վերաբերյալ որոշում, 5. ներկայացնել արագացված դատական քննության հիմքերը, պայմանները և իրականացման ընթացակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր., Տիգրան Մեծ, 2017: 2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս. Երևան, Երևանի համալս. հրատ., 2010: 3. Уголовный процесс: учебник / под ред.: Божьев В.П. – 4-е изд., перераб. и доп. – М.: Спарк, 2004. 4. Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. П.А. Лупинская. – М., 2011. 5. Уголовный процесс. Общая и Особенная части: учебник для юридических вузов и факультетов / под ред.: В.В. Вандышева – М.: Контракт, 2014. 6. Уголовно-процессуальное право: учебник для бакалавриата и магистратуры / под общ. ред.: В.М. Лебедева. – 2-е изд., пер. и доп. – М.: Издательство Юрайт, 2017.
Լրացուցիչ		***Թեմա 10.*** 1. *Ефимичев, П.С.* Расследование преступлений: теория, практика, обеспечение прав личности: монография / П.С. Ефимичев, С.П. Ефимичев. – М.: Юстицинформ, 2012. 2. *Бордиловский, Э.И.* Приостановление, возобновление, прекращение уголовного дела и окончание предварительного следствия: учебное пособие / Э.И. Бордиловский. – М., 2004. 3. *Степанова, Н.А.* Недостатки в организации работы следователей по делам, предварительное следствие по которым приостановлено на основании п. п. 3, 4 ч. 1 ст. 208 УПК РФ / Н.А. Степанова // Российский следователь. – 2010. - № 12. 4. *Шихова Л.* Следствие по приостановленным уголовным делам // Законность. – 2005. – № 6.

		Թեմա 11. 1. *Безруков С.С., Попков Н.В.* Реализация следователем права на обжалование решения прокурора и сроки предварительного следствия: конфликт неизбежен // Российский следователь. – 2011. – № 7. 2. *Булатов, Б.Б.* Возмещение в порядке ч. 3 ст. 133 УПК РФ вреда, причиненного подозреваемому незаконным задержанием / Б.Б. Булатов, В.В. Николюк // Российский следователь. – 2011. – № 1. 3. *Миньковский, Г.М.* Окончание предварительного расследования и право обвиняемого на защиту: монография / Г.М. Миньковский. – М., 1957. 4. *Николюк, В.В.* Субъекты права на возмещение вреда в соответствии с ч. 3 ст. 133 УПК РФ / В.В. Николюк // Российский судья. – 2011. – № 4. 5. *Рыжаков, А.П.* Окончание предварительного расследования: учебное пособие. – М., 1999. ***Թեմա 12.*** 1. *Зуев, С.В.* Обжалование в кассационном и надзорном порядке судебных решений, принятых в ходе досудебного производства по уголовным делам / С.В. Зуев // Российский следователь. – 2011. – № 23. 2. *Ковтун Н.Н.* Судебный контроль в уголовном судопроизводстве России. – Н. Новгород: Нижегородская правовая академия, 2002. 3. *Мельников В.Ю.* Судебная реформа – некоторые вопросы судебного контроля / В.Ю. Мельников // Российский судья. - 2008.- № 1. 4. *Цурлуй О. Ю.* Судебный контроль в досудебном производстве: краткий историко-правовой анализ // Актуальные проблемы российского права. 2015. № 1. 5. *Питулько К.В.* Судебный контроль за применением заключения под стражу и реализация права обвиняемого (подозреваемого) на защиту в уголовном процессе РФ – СПб.: Изд-во "Левша. Санкт-Петербург", 2000. 6. *Пиюк А.* Состязательность на стадии предварительного расследования и судебный контроль // Рос. юстиция. – 2000. – № 4. ***Թեմա 13.*** 1. *Лупинская, П.А.* Решения в уголовном судопроизводстве: теория, законодательство, практика: учебное пособие / П.А. Лупинская. – М.: Инфра, 2012. 2. *Гуськова А.П.* Процессуально-правовые и организационные вопросы подготовки к судебному заседанию по УПК РФ / А.П. Гуськова. – Оренбург, 2002. 3. *Леви, А.* Отказ государственного обвинителя от обвинения / А.Леви // Законность – 2011. – № 6. 4. *Рыбалов К.А.* Особый порядок судебного разбирательства в Российской Федерации и проблемы его реализации: монография / К.А.Рыбалов. – М.: Юрлитинформ, 2012.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1 – միջանկյալ քննություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	Միջանկյալ գնահատման միավոր Հարց 1 — 2 միավոր Հարց 2 — 2 միավոր
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել 40 % առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» (կուրսային աշխատանքի պաշտպանությունից) կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:

Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 10 Քրեական գործով վարույթի կասեցումը, կարճումը և քրեական հետապնդումը դադարեցնելը **(2 ժամ գործնական պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործով վարույթի կասեցումը. 2. Քրեական գործով վարույթի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը:	Հարցեր 1-2՝ գործնական պարապմունք – Քրեական գործով վարույթի կասեցման, կարճման (քրեական հետապնդման դադարեցման) որոշումների ձևաթղթերի կազմում: Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 11 Նախաքննության ավարտումը մեղադրական եզրակացությամբ **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտման դատավարական կարգը 2. Մեղադրական եզրակացության նշանակությունը, կառուցվածքը և բովանդակությունը	**1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: **2.** Հարց 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 12 Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները և կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցները 2. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դատավարական կարգի առանձնահատկությունները 3. Դատարանի որոշմամբ կիրառվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները 4. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան	**1.** Հարցեր 1-4՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: **2.** Հարցեր 1-4՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: **3.** Հարց 1-4՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 13 Դատական քննության հասկացությունը և ընդհանուր պայմանները: Դատական քննության արագացված կարգը **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատական քննության հասկացությունը, նշանակությունը և ընդհանուր պայմանները. 2. Դատական քննության մրցակցային բնույթը և դատարանի կարգավիճակը. 3. Դատական քննության մասնակիցները և նրանց չներկայանալու հետևանքները. 4. Դատական քննության սահմանները. 5. Դատական քննության ընթացքում ընդունվող դատական որոշումները. 6. Դատական նիստի կարգը և դրա պահպանումը. 7. Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները. 8. Դատական նիստի արձանագրությունը: 9. Դատական քննության կառուցվածքային մասերը 10. Դատական նիստի նախապատրաստական մասը 11. Դատաքննություն 12. Դատական վիճաբանությունները և ամբաստանյալի վերջին խոսքը 13. Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմքերը և պայմանները 14. Դատական քննության արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը	1. Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: 2. Հարցեր 6-14՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

ՀԱՐՑԱՇԱՐ

«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 3» առարկայի միջանկյալ քննության

1. Քրեական գործով վարույթի կասեցումը
2. Քրեական գործով վարույթի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը
3. Մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտման դատավարական կարգը
4. Մեղադրական եզրակացության նշանակությունը, կառուցվածքը և բովանդակությունը
5. Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները
6. Դատարանի որոշմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցները
7. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դատավարական կարգի առանձնահատկությունները
8. Դատարանի որոշմամբ կիրառվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները
9. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան
10. Դատական քննության հասկացությունը, նշանակությունը և ընդհանուր պայմանները
11. Դատական քննության մրցակցային բնույթը և դատարանի կարգավիճակը
12. Դատական քննության մասնակիցները և նրանց չներկայանալու հետևանքները
13. Դատական քննության սահմանները
14. Դատական քննության ընթացքում ընդունվող դատական որոշումները
15. Դատական նիստի կարգը և դրա պահպանումը
16. Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները
17. Դատական նիստի արձանագրությունը
18. Դատական քննության կառուցվածքային մասերը
19. Դատական նիստի նախապատրաստական մասը
20. Դատաքննություն
21. Դատական վիճաբանությունները և ամբաստանյալի վերջին խոսքը
22. Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմքերը և պայմանները
23. Դատական քննության արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը